

Երեւան



2

(185)
Փետրվար, 2022

ԵՎԵՔ ՆՈՐԻՑ ԸՆԹԵՐՅԵՆՔ

Թումանյանի հեքիաթների մասին մեզինչ անաչ շատերն են խոսել, վերլուծել, մեկնաբանել տարբեր տեսանկյուններից, դրսևորել տարբեր մոտեցումներ: Անվիճելի փաստ է, որ մեծ լուռեցին հեքիաթներ գրելիս օգտվել է ժողովրդական ակունքներից և, ըստ հեղինակի, դա է հեքիաթ գրելու ճշմարիտ ուղին: Հոգվածներից մեկուն գրում է. «Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանում են: Ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»:

Թումանյանի հեքիաթները կոնկրետ հասցեստեր չունեն, տարիք չեն ճանաչում: Հետևաբար ամեն տարիք իր ընկալման շերտն ունի: Որքան մարդը հատուկանում է, այնքան խորն է ընկալում հեքիաթները՝ բացահայտելով իր համար նոր կենսափոխակայություն, կյանքն ապրելու նոր բանաձևեր:

Չկա մի մարդ, որին ծանոթ չլինի «Անխելք մարդը» հեքիաթը: Այդքան պարզ թվացող այսուհետ մի մարդու մասին է, որն օրինակում աշխատում է, բայց ոչ մի բանի չի հասնում: Մի օր էլ որոշում է վեր կենալ զենալ Աստծո՛ւ մոտ՝ պարզելու, թե բանն ինչն է: Գաղափարն էլ հետևյալն է՝ Ամենակարողը տալիս է հնարավորություն. թե կարող ես, օգտվիր, թե ոչ՝ գայլի բաժին կդառնաս: Հեքիաթի ավարտն ավելի քան զվարճալի է: Սոված գայլն իր անհագուրդ քաղցը հագեցնում է՝ ուտելով անխելքին: Ընթերցողն էլ մի լավ ծիծաղելուց հետո ավելացնում է՝ շատ էլ լավ արեց:

Փորձենք նորից ընթերցել հեքիաթը, ասես առաջին անգամ

ենք մեր ձեռքն առնում: «Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում»:

Ինչո՞ւ: Չէ՞ որ համաձայն ասացվածքի՝ «աշխատանքն է ամեն բարիքի ծնողը», կամ «աշխատանքն ազնվացնում է մարդուն»: Հեքիաթում ո՛չ բարիքի ծնունդն ենք տեսնում, ո՛չ էլ ազնվությունը: Մարդն իր սխալների ու անհաջողությունների համար մեղավորներ է փնտրում և ոչ ավել-ոչ պակաս, վեր է կենում ու գնում ուրիշ Աստծո՛ւ մոտ: Սա տգետ մարդու դասական օրինակն է:

Հեքիաթի գործողություններն սկսում են զարգացում ապրել: Մարդը հանդիպում է սոված գայլին: Իսկ ինչո՞ւ գայլին: Սա հեքիաթում այլաբանական կերպար է, որը մի դեպքում մարդ գազանն է՝ ոգու քաղց ապրող, ու եթե չկանխենք այս գազանին, ապա մարդկության անկումը մոտ է: Մյուս դեպքում էլ գայլ սանիտարն է, որ մաքրում է բնությունը արատավոր երևույթներից:

Հաջորդ հանդիպումն աղջկա հետ է՝ հարուստ ու գեղեցիկ, որը, չնայած այդ ամենին, երջանիկ չէ: Թումանյանը երջանկությունը գտնելու բանալին է տալիս մեզ: Իրական երջանկությունը ո՛չ նյութականի, ո՛չ էլ արտաքին գեղեցկության մեջ է, այլ անկեղծ սիրու հիմքով կառուցված ընտանիքի:

Այնուհետև մարդը հանդիպում է ծառին: Ծառը խորհրդանշում է մեր կյանքը, մեր հարատևությունը: Սակայն այն չորացած է՝ չնայած ջրի ափին գտնվելով: Ծառի չորանալու պատճառն արմատների մեջ մխրձված ոսկին է: Հնարավոր է, որ ոսկին, բնական պաշար լինելով, խանգարել է ծառի բնական աճին: Պարզ է, խոսքը նյութական հարստության մասին է, որ կարող է կուրացնել մարդուն՝ հեռացնելով նրան արմատներից, վերածելով



չորացած անպտուղ ծառի:

Հեքիաթում հատկանշական է նաև այն, որ մարդը, Աստծու մոտից հեռանալով, հստակ գիտի բոլորի՝ երջանկության հասնելու ճանապարհները, որոնք ուղղակիորեն տանում են իր խնդրի լուծմանը ևս, բայց նա զվիչ չի ընկնում, ավելի ճիշտ, չի ցանկանում մտածել, քանի որ իր փոխարեն արդեն Աստված մտածել էր: Հեքիաթագիրը հուշում է ընթերցողին՝ ոչինչ հենց այնպես չի տրվում կյանքում:

Անսպառ ոգևորությամբ ու ծիծաղի բարձր նոտաներով ընթերցում ենք «Կիկոսի մահը» հեքիաթը: Չավելաշաղկապ այս պատմությունն այնքան էլ հեքիաթ չէ, որքան պարզ իրողություն: Զուգահեռներ տանելով երկու հեքիաթների միջև՝ հետաքրքիր գուգադիություններ ենք տեսնում: Եթե «Անխելք մարդը» հեքիաթի մարդու կեցության խորհրդանշական չափը խնդիրը սոված լինելն էր, ապա «Կիկոսի մահը» հեքիաթում ծարավ էր ընտանիքի մեծը՝ հայրը: Սա սովորական ֆիզիոլոգիական վիճակ չէ, այլ ոգու ծարավ, որ շոշափվեց նաև «Անխելք մարդը» հեքիաթում գայլի կերպարով: Ոգեղեն սմնդի բացակայության փաստը մարդուն մղում է ցածրորակ կենսակերպի, երբ ամեն ինչում առաջնորդում է բնագործ: Ծայրահեղության հասնող տգիտությունը, կրթված ծնողի, գլխավորապես մոր բացակայությունը

երեխաների դաստիարակության գործում արմատավորում են այնպիսի արատավոր երևույթներ, ինչպիսիք են դեռահասի վաղաժամ հասունացումն ու ոչ բնական մղումները: Հեքիաթի գաղափարն ամբողջանում է մտացածրի Կիկոսի մահով ու հեքիաթում առկա շեշտադրված կրկնություններով՝ «վեր ելավ ծառին, վար ընկավ քարին...վա՛», Կիկոս ջան, վա՛, որդի՛ ջան»: Հունորով շղարշված, բայց սարկազմով շեշտադրված (սրանց միջի խելոքը հերն ա լինում) հեղինակն առաջ է բերում հեքիաթի ենթատեքստը, որը բնորոշ ենք ժողովրդական իմաստուն մտքով՝ «խեր լինի, այսքան ծիծաղը լաց կբերի»:

«Կացին ախպերը» հեքիաթի համանուն հերոսն ո՞վ է՝ ա՛մձ, գուցե մեխանի՞զմ, նոր հասարակա՞րգ, որը շատ պատահական մուտք է գործում մի միջավայր, ուր ամեն ինչ դեռ նախնական է, վայրի (այս գյուղի մարդիկ ձեռքով են փայտ կտորում):

Առաջին հայացքից հրապուրիչ թվացող այս գործիքը պետք է հեշտացներ նրանց կյանքը, բայց ստացվում է հակառակը: Ինչո՞ւ: Ամեն ինչ ավելի քան ակնհայտ է: Հասարակությունը դեռ պատրաստ չէ այս գուցե բարենպաստ փոփոխությանը: Ավելին, չունի այն առաջնորդին, որը ի գորու է կազմակերպելու, աշխատեցնելու մեխանիզմը: Ամեն մի նորով հմայված՝ ցանկացած գնով գյուղի բնակիչները փորձում են ձեռք բերել կացինը, սակայն գործիքը սխալ կիրառելով՝ փորձանք են բերում իրենց գլխին: Հեքիաթում հատկանշական է նաև այն, որ Կացին ախպրոն առաջինը գյուղի «էլիտան» գյուղապետն է գործածում՝ մեկնարկային հարվածը հասցնելով հենց իրեն: Ապա մի շարք ծախորդություններից հետո սկսում են քննադատել ու քարկոծել գործիքին՝ չընդունելով սեփական սխալները: Եթե այս հեքիաթն ունենար շարունակություն, և հաջորդ անգամ արտաքին աշխարհից (ներսը մենք ենք՝ մեր

մշակույթով) բերվեր սղոց կամ ուրիշ գործիք, միևնույնն է, գյուղացիները նույն ճանապարհն էին անցնելու՝ դաս չբաղելով նախկին սխալներից:

«Խելոքն ու հիմարը» հեքիաթը շատ տարածված ընտանիքների դասական օրինակն է: Բայց ծիծաղից զատ՝ այս հեքիաթում առկա է մի մեծ ողբերգություն, որի միջով ամբողջ աշխարհն է անցնում: Սա, ըստ էության, ոչ թե խելոք ու հիմար եղբայրների պատմությունն է, այլ գերտերությունների խաղը փոքր ու թույլ պետությունների հետ, որոնց պարտություններն ու անհաջողությունները դառնում են հաղթաբուրդ հզորի ձեռքում՝ էլ ավելի նսեմացնելու դիմացինի արժանապատվությունը և ոտնահարելու թույլի իրավունքները: Փոքր եղբոր անհեռատես ու միամիտ քայլերը (անխաղախ հավատը եղբոր հանդեպ, մեկ ձեռք նոր հագուստ ունենալու խոստման դիմաց ունեցածը տալը, զանձերի տեղը ասելը) հանգեցնում են հերոսի հեղինակազրկմանն ու կործանմանը: Այս պարագայում ոչ մի միջոց գորավոր չէ պաշտպանելու արդարությունը, մինչև անգամ վերին աստվածները չեն կամենում քննել գործն ու բացահայտել ճշմարտությունը:

Այսպիսով՝ ամեն մի հեքիաթ մի բանաձև է կյանքն իր բոլոր կողմերով բացահայտելու և ապրելու համար: Թումանյանական աշխարհն ավելի քան ընդգրկում է ու բազմաշերտ: Եթե թյուրիմացաբար կրկնում ենք դարձվածքի վերածված «հեքիաթ միշտ պատմիր» արտահայտությունը, ապա պետք է հասկանալ առաջին հերթին, որ հենց հեքիաթն է կյանքը ճշմարտացիորեն բացահայտողը, հեքիաթն է ամենաբարդ ստեղծագործությունը: Հովհաննես Թումանյանը հենց այնպես չի ասել. «Ոչ բոլորն են հեքիաթներ գրել, բայց բոլորն են ձգտել հեքիաթների»:

Հերմինե ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

«Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կենսականությամբ»: Մարկոս Ավրելիոսի այս խոսքերը միշտ են արդիական: Գրքի կարևորությունն ավելի է սրվել մեր օրոյա խառնակ ժամանակներում, երբ մարդիկ հեռացել են գրքից, գրականությունից, մշակույթից, և որ ամենասարսափելին է՝ Աստծուց: Հիմա, առավել քան երբևէ, ավելի է կարևորվում գիրքը, լավ գիրքը, որն օգնում է աշխարհաճանաչողությանն ու ինքնաճանաչողությանը:

Փետրվարի 19-ը Հայաստանում նշվում է «Գիրք նվիրելու օր»: Այս օրը տոն դարձնելու համար պարտական ենք ՀԳՄ երջանակահիշատակ նախագահ Լևոն Անանյանին, որի որոշմամբ, սկսած 2008թ.-ից, փետրվարի 19-ը նշվում է որպես հոգու տոն: Օրվա ընտրությունը բնավ պատահական չէ. 1869թ.-ի այս օրն է ծնվել ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

Գիրք նվիրելու օրվան ընդառաջ դարձյալ Հիրակի մարզային գրադարանում տեղի ունեցավ գրական հանդիպում ՀԳՄ Հիրակի մարզային բաժանմունքի

անդամների հետ:

Բացման խոսքով հանդես եկավ Հիրակի մարզային գրադարանի տնօրեն Գ. Ամիրյանը՝ խոսելով օրվա խորհրդից:

Ներկա էին բանաստեղծ Ա. Կարապետյանը, բանաստեղծուհի Լ. Աղաջանյանը, Ա. Ատոմը, Ս. Մուրադյանը, Ռ. Եսայանը: Հանդիպմանը մասնակցում էին Գյումրու տնտեսագիտական վարժարանի 9-10-րդ դասարանցիները /գրականության ուսուցչուհի՝ Լ. Ջոբյան/, որոնք ներկայացրին եղիշե Չարենցի մկրված գրական-երաժշտական կոմպոզիցիա և «Հիրակի մարզի երեխայի և

ընտանիքի աջակցության կենտրոնի» արվեստի խմբակի սաները /արվեստի խմբակի ղեկավար՝ Վ. Կարապետյան և անգլերեն լեզվի խմբակի ղեկավար՝ Ռ. Հարությունյան/. Նրանք ընթերցեցին Չարենցի անկրկնելի բանաստեղծություններից:

Գրողները ներկայացրին իրենց ստեղծագործություններից, ապա օրվա խորհրդին համապատասխան գրքեր նվիրեցին գրադարանին ու ցերեկույթի մասնակիցներին:

Վարդուհի ՎԱՐՄԵՏՅԱՆ





ԱՆՊՐԱՆԻԿ ԱՆՏԱՆԵԱՆ

Ծնած է 1974-ին ի Դիլիջան, մանուկ տարիքին հեռացած է: Մեծ-ցած է Պելառուսի մեջ, ուսած նախ Մոսկուա, ետքը՝ Վիլնիուս, ուր մինչև օրս ալ կը բնակի: Ստեղծագործ լուսանկարչութեամբ եւ գեղագրութեամբ կը զբաղի: Կը գրէ բացառապէս պելառուսերէն:

ԴՈՒՆ

Կը յիշեմ, որ մանկութեանս կը վախճայի քնանալէ: Յոգնաբեկ գիտակցութիւնը կ'ազդարարէր, որ քունի մեջ չէ որ կը սուզուի, այլ մահուան մեջ: Քառորդ դար ետք կը պարզուէր, որ իմ աղջիկներս նման մտավախութեան կը տա-նապէին Մորիսիոսի գիրքը նետու-ած ատեն:

Տարածուած մանկական վա-խեր են ատոնք: Թերեւս ատո՞ր համար է, որ բանահիւսութիւնը այդչափ օրորոցային կը ճանչ-նայ:

Չեմ գիտեր՝ երբ եկած էր պա-հը, երբ սկսած էմ քուն մտնելս դիտել իբրեւ դուռ մը՝ զուգահեռ կեանքի մը վրայ բացուած, ուր ես երբեմնի ընկերներուս կը հան-դիպիմ, գլան կը ծխեմ ու Լիթուա-նիոյ պասքեթպոլի խումբի կազ-մին մէջ կը խաղամ:

Չեմ կրնար ըսել, որ երագներս կարօտով կը յիշեմ արթնալէս ետք: Ծխախոտէն, որոշ ընկերնե-րու եւ մարզական յաւակնութիւն-ներու հրաժարած եմ շատոնց:

Պարզապէս կը վայելեմ կրկնակ կեանք մը անպատիժ վա-րելու հաճոյքը:

ՄԵՆԵԼՈՏԸ ՎԻԼՆԻՒՍԻ ՄԵՋ

Հոկտեմբեր ամսուան կէտերէն ետք, Մեռելոցի նախօրէին, Վիլ-նիւսը խայտաբղետ վառ գոյներով կը ներկուի:

Փողոցներու եւ վաճառատու-

ներու մէջ ամէն անկիւնէ աչքիդ կը ցատկեն հրաբորբ գունազեղ երկնատունկեր, գետորգեակներ եւ կեղծ ձեռակերտ ծաղիկներ՝ շիրիմները զարդարելու կոչուած:

Ծաղկավաճառներու հիմնա-կան յաճախորդ լիթուանիացի որբեայրիները՝ այլապէս զուսպ ու անկիրք, այդ օրերուն ճչացող ու խելագար երանգապնակին միջոցաւ արտայայտել կը ջանան անյատակ ու անսահման իրենց կսկիծը:

Կը վշտակցիմ միայնակ ծե-րանալու դատապարտուած այդ կիներուն, սակայն արուեստա-կեալ գոյներու այդ շքահանդէ-սը ջիղերուս կը դիպչի: Ինչ որ իր կարգին կապ չունի համա-տարած մեռելասիրութեան հան-դէպ հեզմանքիս հետ: Ի դէպ, ո՞ր երեւոյթն է աւելի յարիւր օրուան խորհուրդին. ծաղիկներուն հրա-վառութիւնը, թէ՞ յուսահատօրէն ամպամած աշնան մռայլ երկին-քը:

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ

Օսթրոու մովա-Լեպետեալ նկարչուհիին յուշերէն մտքիս մէջ մխրճուած մնացեր է հետեւեալը. Իտալացի մատենավաճառնե-րը ժՆ դարու հնատիպ գիրքերէն անխնայ կը փրցնէին փորագրա-տիպները, իսկ մնացած էջերը մե-լանադծօրէն կը նետէին կրակին մէջ: Նման ընթացքը բարբարո-սութիւն է, եւ յուշագրին վրդով-մուքն այդ առիթով միանգամայն տեղին է:

Յուշագրութեան այդ դրուագը կրկին միտքս բերաւ հետեւեալ դիպուածը. օր մը ձեռքս կ'անց-նէր ժՆ դարու գերման հանրագի-տարանի մը քրքրուած հատորը:

Բոլորովին անշահ էր թէ՛ տեղոյս, թէ՛ Գերմանիոյ մատենավաճառ-ներուն համար: Չաւակներուն հասցնելու ամենէն ակնյայտ միակ ձեւը հատորը էջատելը պի-տի ըլլար՝ պատկերները զատե-լով ու պահելով:

Նման որոշում մը առած ատե-նը կարելոր է որ յիշես, որ դուն վիրաբոյժ մը չես՝ անգութ քու մշտնապահ կեանք մը փրկող, այլ բժշկութեան ուսանող մը, որ փողոցէն վեր առնուած ան-տէր դիակ մը հերձելով՝ քննե-լիք դասանիւթեր կը պատրաստէ ապագայ բժիշկներու համար:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՓՈՐ-ՉԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Խմբագրապետը խնդրեց, որ փորձագրութիւն մը պատրաս-տեն ընկերութեան մասին: Ըսաւ որ «Ընկերութեան տարին» է այս տարի, ինչպէս որ անցեալ տա-րին «Ծննդավայրին տարին» էր, եւ ըսաւ, կ'արժէ լոյս թափել կա-րելոր այդ միւթին վրայ: Կատա-կով մերժեցի, ըսի, որ Սահարա անապատին մէջ աւելի դիւրին է ճահիճներու մասին գրելը քան Վիլնիւսի մէջ՝ ընկերութեան մա-սին:

-Այն ատեն, փոխադարձեց խմբագրապետը, չեղած բանի մասին գրէ: Սահարայի բնակիչ-ները շատ յստակ գաղափար ու-նին, թէ ինչպիսիւն չէ ճահիճը:

-Ի՞նչ գրեմ սակայն: Այն մասին որ երկու հոգի կայ այս քաղաքին մէջ, որոնք զիս բարեկամ կ'անու-անեն՝ ամէն անգամ շփոթի մատ-նելով գիս:

Ինչո՞ւ չէ: Լիթուացիի մը հա-մար շատ բնական է մէկը բարե-կամ կամ ընկեր կոչելը: Օրինակ, ես կրնամ ըսել որ դուն ընկերս ես:

-Քու պարագադ շատ յստակ է: Որ ընկեր կ'ըսես ինձի, որովհետեւ բան մը կ'ուզես ինձմէ: Որ քիչ մը դրամ փոխ տամ քեզի, օրինակի համար:

-Ոչ, բնաւ պայման չէ: Իսկ եթէ ընդհակառակն՝ ես գումար մը պարտք եմ: Այն ատեն պարտատէրես ոչ կը գրես ինձի, ոչ ալ կը հեռաձայնես: Մինչ էս՝ արեւելքցիիս փափկութեամբ կը հեռաձայնեմ ու որպիսութեանս կը հարցնեմ: Իրենք ինձի երբեք չեն հեռաձայնէր, իսկ դուն կ'ը-սես. «ընկեր»: Մինչեւ օրս չեմ գի-տեր, ինչ ըսել է ընկեր:

-Թերեւս պելառուսներու հետ աւելի դիւրութեամբ գլուխ կ'ել-լես: Ի՞նչ ըսեմ. երբ մէկը հեռա-ձայնէ ու սկսի երկար բարակ որ-պիսութիւնս հարցնել՝ խօսքը կը կտրեմ հարցնելով, թէ ուզածը ի՞նչ է վերջապէս:

-Քիչ մը կոպիտ է, չըսե՛ս: -Հապա ի՞նչ. կոպիտ է: Սա-կայն այս ձեւով ամենուս համար աւելի յարմար է:

-Թերեւս համաճարակի՞ պայ-մաններուն տակ ընկերութեան մասին գրես:

-Ուրեմն մտիկ ըրէ՛ պատմեն: Օր մը քիթիս բերնիս վրայ վար-դագոյն գեղեցիկ դիմակով մը փողոցէն կը քայլեմ: Յանկարծ մե-կը զիս կը կանչէ: Դառնալով կը մօտենամ. ներկայ դիմակահան-դէսին ոչ մէկը կրնաս ճանչնալ այլեւս: Սօտենալով ի՞նչ տեսնեմ. վաղեմի ընկերներէս մին է: Հան-րակացարանի օրերէս: Ետքուան քսան տարուան մէջ ալ յաճախ կը տեսնուէիք: Սակայն այս ամէնը անցեալին կը պատկանի այլեւս: Տղազարի պէս կը պոռայ. «եր-կու մեթր, երկու մեթր ո՞ւր: Մէյ մը կը հասկնամ, որ ինձի երկու մեթր անդին մնալ, իրեն չմօտենալ կը թելադրէ, առողջապահութեան նախարարութեան յանձնարարա-ծին պէս, կ'երեւակայե՞ս:

-Ի՞նչ ըսեմ, ամէն մէկս տար-բեր ենք: Ասո՞ր մասին գրէ: -Կ'ըլլայ: Ըսածիդ պէս ընեմ:

ՄԵՐ ՏԻՐՈՒԻՆ

Երբ տակաւին պզտիկ էի ու դպրոց կ'երթայի, ամէն ամառ օդափոխութեան կ'երթայի պա-տանեկան Քիրովցե ճամբարը Սոխիլեով քաղաքին մօտերը: Եւ երբ անվերջանալի անձրեւը մեզ պատանդ կը բռնէր՝ ննջասենեակ-ներուն բանտարկելով, որոնք այդչափ խոնհաւ էին, որ հոն պա-հուած չոփ չոր կրկնէի մը կը բոր-բոսէր հազիւ երկու օրէն: Չանձ-րոյթէն միակ փրկութիւնը Մեր Տի-րուհին էր:

«Մեր Տիրուհին» խաղ մըն էր: Տարօրինակ, մոզական եւ կա-խարդական՝ ան պատանգի մեր հոգին կը լեցնէր ապրումներով, որոնք մինչեւ օրս իրենց իսկու-թեամբ կը զարմացնեն:

Բեմադրութիւնը պարզ էր: Վեց հոգի կամաւոր գտնել պէտք էր, երկու անկողինները քով քովի հրել: Եւ կամաւորներէն մին Մեր Տիրուհին դերին համար ընտրել: Ձիւնք անկողինը կը պառկեցնէին, ան աչքերը կը փակէր, ձեռքերը կտրօքին վրայ կը խաչէր եւ մե-տելի պէս աճաբժ կը մնար: Մնա-ցեալ տղաք ծուկի իրեն շուրջ՝ ամէն մէկը երկուքական մատ կը թխնէր Մեր Տիրուհին անշարժ մարմինին տակ: Լոյսը կը մա-րուէր, եւ մասնակիցներէն մին կը սկսէր ծիսակատարութիւնը: Անդրձիւրիմեան ձայնով կ'արտա-

սանէր. «Մեր Տիրուհին վախճա-նեցաւ...»: Մենք կարգով կ'երկ-րորդէինք. «Մեր Տիրուհին վախ-ճանեցաւ...»: Մենակատարը կը շարունակէր. «Սակայն զինք պի-տի չթաղենք: Թող քաջքերը զինք թաղեն: Թող փետուրի պէս թեթեւ դառնայ: Ամեն»: Փոխասացութիւ-նը միշտ կ'ամփոփուէր «Սակայն զինք պիտի չթաղենք...» խօսքով: Ծեւը կատարուած փետուրի պէս մարմինը երկուքական մատերով վեր կը հանէինք Մեր Տիրուհին: Ընդամենը երկու անգամ կատա-րած եմ մեռելին դերը: Արագըն-թաց այդ վերելքին ատեն աչքերդ սարսափէն կը բացուէին, եւ մար-մինդ կարծես կը մոռնար երկրա-գունդի ձգողութեան մասին: Եւ կը կախուէր օդէն: Որմէ ետք կը գահավիժէիր ճշման զսպանակ-ներով խոնհաւ անկողինիդ վրայ:

Չարաշուք այդ ծիսակա-տարութեան իմաստը փնտռե-լը աննպատակ կը թուի ինձի հիմա: Ատոր վերջնականապէս հանձնուցայ, երբ այս տարի Ս. Ծննդեան գիշերը ընկերնե-րուս թելադրեցի կրկին մօտենալ կշռագերծութեան սեմին: Ամենքը իսկոյն յօժարեցան: Լոյսը մարե-ցին, սկսան պարտաճանաչօրէն արտասանել խօսքերը, ամէն մէկը զինք փորձեց հանգուցեալ Տիրու-հին դերով: Միայն թէ մարմիննե-րը կը մերժէին անկողինէն կտրու-ելու: Մէկը կատակեց. «Հաւանա-բար Մեր Տիրուհին թաղած են առանց մեզմէ հրաման առնելու»: Իսկ յետոյ երկարօրէն ու ձանձ-րալիօրէն կը դարձնէինք Փիթըր Փէնի միւթը եւ մանկութեան մեջ թողած թռչելու կարողութիւնը: Տրամադրութիւնս խորտակու-եցաւ: Նման թախծը պատած է մեզ, երբ վախճանուէր է մեծ հայրս՝ հետը տանելով սունկի թէյ քաշելու գաղտնիքը, կամ երբ կա-րօտ մնացինք մեծ մօրս հայերէն մանակներու սրածայր գիրերուն: Տխուր է նաեւ, որ այս կարօտները անմարմին են. երբեք չեմ հաւնած սունկի թէյը եւ մինչեւ օրս իսկ չեմ սորված կարողալ հայերէնը: Սա-կայն երբ վիլնիւսեան ձմեռուան անձրեւը փոխաբերական ամէն իմաստ անդին կը գլորէ, եւ առ-տու անկողինէն ելլելը անիմաստ կը դառնայ, ես պարզապէս կը մնամ անկողինիս վրայ երկնցած եւ փակ աչքերով հմայիլի մը պէս կ'արտասանեմ. «Մեր Տիրուհին վախճանեցաւ: Սակայն զինք պի-տի չթաղեն: Թող քաջքերը զինք թաղեն: Թող դառնայ փետուրի պէս թեթեւ: Ամեն»:

Թարգմանեց Ենովք ԼԱՉԵԱՆԸ



Ա/թ փետրվարի 22-ին Լո-ռու մարզային գրադարանում և փետրվարի 24-ին Գյումրու գեղա-գիտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ Արարատ Մկրտում-յան հիմնադրամի սահմանած ամենամյա հանրապետական երի-տասարդական գրական մրցանա-կաբաշխության 2020թ. և 2021թ. արդյունքների ամփոփումը:

Մրցանակը Արարատ Մկրտումյանի դիմապատկերով հուշամեդալ և մրցանակ շահած գրքի տպագրություն, սահմանվել է բանաստեղծի եղբոր՝ Արթուր Մկրտումյանի նախածնունդ-յամբ՝ ի շահ հայ գրականության զարգացման:

2020 թվականին մրցանակա-բաշխությանը մասնակցել են Լո-ռու մարզում ապրող երիտասարդ ստեղծագործողները: Գլխավոր մրցանակին արժանացել է Մա-նուշակ Քոչարյանը՝ «Գույներ»


բանաստեղծական ժողովածուի համար, իսկ խրախուսական մրցանակի են արժանացել 5 հե-ղինակներ՝ Մարինե Թաթոյանը, Վիդեա Լապտան, Հրաչուհի Լոռեցյանը, Իրմա Հակոբյանը և Նարե Վարդումյանը, որոնց ստեղ-ծագործությունները տպագրվել են «Բարձրացող շնչառություն» խորագրով անթոլոգիայում:

2021 թվականի մրցանակա-բաշխությանը մասնակցել են Շիրակի մարզում ապրող երի-տասարդ ստեղծագործողները: Գլխավոր մրցանակին արժանա-ցել է Լևոն Բեժամյանը՝ «Զփոսեմ, ասել եմ, թե չէ» բանաստեղծա-կան ժողովածուի համար, իսկ խրախուսական մրցանակի են արժանացել 19 հեղինակ /Գոհար Գրիգորյան, Աստղիկ Խաչատր-յան, Մարիա Ակոպովա, Անի Ղա-զարյան, Լատրա Հարություն-յան, Վիլիկ Սահակյան, Շուշան

Ղազարյան, Մարիամ Սարգսյան, Անուշ Գևորգյան, Անի Մարդույան, Անահիտ Տոնոյան, Մերի Գևորգ-յան, Անահիտ Ղազարյան, Սոֆյա Մարգարյան, Շողիկ Ղազարյան, Նվեր Մինասյան, Մելիք Միքայել-յան, Լիաննա Ստեփանյան, Մի-շա Սանուկյա, որոնց ստեղծա-գործությունները տպագրվել են «Շիկմոդ հայեցումներ» խորագ-րով անթոլոգիայում:

Հ.Գ. Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը ավանդաբար տեղի էր ունենում Արարատ Մկրտումյանի ծննդա-վայր Ավաներդիում կամ Գյում-րիում նրա ծննդյան օրը՝ մայի-սի 1-ին: Սակայն Հայաստանում արտակարգ դրության սահմանա-փակումներով պայմանավորված մրցանակաբաշխության արարո-ղությունը հետաձգվել էր:

Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



ՄԱՆՈՒՇԱԿ ԲՈՉԱՐՅԱՆ

Եվ առաջին անգամ, երբ ես խոտ հնձեցի, Մանգաղն ինձնից մեծ էր, և դու Առաջինն էիր, որ իմ ձեռքերից բռնած Յնձել էիր սովորեցնում:

Իսկ ես ուրախ էի, և ավերս՝ արնած, Վարսերս արտեր էին, և դու Հայացքդ ձեր տնից ձգում էիր ծարավ, Որ փրփրեր առատ իմ վարսերում:

Ես խոտեր հնձեցի, ծառեր ընկան անթիվ, Սերը մեծ էր ինձնից, և դու Գյուղի աղոտ մի ցող դրիր մատնեմատիս, Ու հայացքդ մնջեց իմ հավատում:

Քեզ հիշում եմ հիմա, հիմա հիշում եմ քեզ, Գիտեմ՝ չես մոռացել և դու: Մատնեմատիս ցողը մոռացել ես այնպես...

Երգը քնած մեռավ այն դեպքերում: Մանգաղի համբույրից ընկնում եմ խոտերը, Բայց աճում եմ նորից նույն մանգաղի համար, Որ արտերի ծոցում միշտ խշխշա սերը, Որ հայացքդ արտում հեկեկա հար:

Խավարի պես փափուկ Ու լույսի պես ծանր Մի երագ է կաթուն Քո հայացքին մանր Իմ հայացքից խոշոր, Իմ հայացքից անձև Ու մորթում է բոլոր թռչուններին անթև, Որ դու ուտես հոգին Մեռած թռչունների, Ու Աստված կների, Իհարկե, կների:

Խավարի պես փափուկ Ու լույսի պես ծանր Ու հույսի պես անտուն Ու խղճի պես մանր Տրոփում է ընկած թռչունի մարմինը, Չբուժված է մնում Ցավագրկված հինը: Ու անցնում է հոգիդ Ընկած հոգուս մոտով Աստծուն մոտենալու Անիրավ հավատով: Իմ հայացքում խոշոր Քո հայացքը մանր Չտեսավ գրված, որ Աստված անսահման է, Խավարի պես փափուկ Ու լույսի պես ծանր Սենյակներով թափուր Միայնության տանն է:

Հեռու, հեռու, հեռու, Հենց իմ աչքի առաջ, Դու շարժվում ես, խոտում, Ես պետք է մոռանամ: Անձայն, անգիծ, անհետ, Անանուն, անսովեր, Հեռու հեռվում ինձ հետ Մի աշխարհ է ավեր: Ես ամեն օր ուժով Ավերում եմ կրկին, Անօրեն պատիժով Ձևափոխել եմ ինձ: Ես ուզում եմ փախչել, Ես կորչել եմ ուզում, Հեռվի ստվերն եմ դաջել Իմ վերջացող հոգում: Վերջապես ինձ լսիր, Տե՛ր անենակարող, Հասիր իմ ձեռքերին, Դու՛ հորինված ծնող: Հեռու, հեռու, հեռու, Իմ աչքերի առաջ Իմ աշխարհն է այրվում. Ու պետք է մոռանամ:

Իմ դժոխքը ունի կապույտ-կապույտ երկինք, Իմ դժոխքը կանաչ-կանաչ աչքեր ունի, Այստեղ ընկա՛ արդեն այտիս կարոտ-կնիք, Ինձ տվեցին աչքեր՝ ցավի, ցավի գույնի:

Ամենքի պես ես էլ Դրախտը պաշտեցի, Հայացքս կռացավ հավատի պարկի տակ, Մերձեցա լույսի հետ, խավարին մերձեցրին, Երագ կառուցեցի՝ մի ճերմակ քավարան: Հանդիպեցի տարվա բոլոր հնչյուններին, Բայց աշունը միայն հայացք

կախեց դեմքիս, Անծանոթ մնացի այգաբացին, կյանքին Ու ողջ ճանապարհին փնտրեցի ինձ ու ինձ:

Իմ դժոխքը ունի կապույտ-կապույտ երկինք, Իմ դժոխքը կանաչ-կանաչ աչքեր ունի, Այնտեղ ընկա՛ արդեն երգիս կարոտ-կնիք, Աչքերս նայեցին ցավի, ցավի՛ գույնին:

ԵՐԿԻՐԸ ԿԼՈՐ ՉԷ

Երկիրը կլոր չէ, երկիրը, Երկիրն այս բարձր ու հպարտ, Անվերջ պտտվող ցավակիր է, Հայացքը՝ հանդարտ, հանդարտ:

Մի ժպիտ ունի կանաչաչ, Հաճելիորեն մի մեծ քիթ. Գնա՛, սլացի՛ր, հանճար, Գրկիր ու սեղմիր կրծքիդ:

Երկիրը տարբեր չէ երկնքից, Ինչպես նույն մարդը հայելում, Այդ երկու խենթերին կենակից Միմիայն խենթերն են վայելում:

Երկինքն էլ, երկիրն էլ աշխարհ են, Նրանք երկուսն էլ իմ տունն են, Երկուսն էլ դեռ դու ես ինձ համար, Ես այդ պատճառով էլ անտուն եմ:

Խելառ ժամանակներ էին... Մոտեցա, լսվեց երաժշտություն, Եվ որպես երգի անսպասելի սկիզբ, Գոռացի՛ սիրում եմ: Հարցրի՛ր ի՞նձ, Ասեցի՛ Սինատրա, Եվ դու շիկնեցիր կրկնակի: Կիրակի էր.

Ազատություն կար... Հետո կիրակին դարձավ երկուշաբթի, երեքշաբթի, վանդակ... Ու էլ չտեսա քեզ:

Հ.Գ. Տեսնես հիմա կա՞մ քո երգացանկում, Թե՞...սպանել ես ինձ քնքշորեն:

Ես շրջում եմ շուրջդ, Դու շրջում ես սուրճը Ու այնտեղ փնտրում անվան մի տառ, Բաժակիդ մեջ հյուր եմ, Քո կողքին ես մուր եմ, Սրճարանում էլ ոչ ոք չկա:

Քո ճերմակ դեմքը Հացի պյուր է, Սառը համբույր է հայացքը քո, Մեր պատվիրածը Դեռ մի քիչ հուս է, Սրտից արյուն է կաթում մեր մեղքով...

Երբ պատուհանդ բացի գողեգող Քո մերկ ուսերը ցանկացող քա՛մին, Հապաղի՛ր փակել, թող ներս գա մեղքով. Այդ ես եմ, սե՛ր իմ...

Հիմա կարող ես շնչել մաքուր օդ. Գալիս եմ հեռու-հեռավոր տեղից, Այստեղ չի եղել երբեք մարդու ոտք. Վայելի՛ր, սե՛ր իմ...

Ես գիտեմ նաև, որ կա վախի հոտ Փշաբաղմանը դիպչող մատների, Դրախտի ներսում չի եղել ամոթ. Բարի լույս, սե՛ր իմ...



ԼԵՎՈՆ ԲԵԺԱՆՅԱՆ

Ասում եմ՝ բախտը բերել է, Չեն տեսել աչքերը մանկուց, Չի տեսել եղեռն ու կռիվ, Աչքերով չի տխրել լալուց:

Ասում եմ՝ բախտը բերել է, Չի տեսել աչքերը կնոջ, Չի տեսել զիստերը բամբակ, Չի տեսել ականջը խխունջ:

Ասում եմ՝ իբր սիրել է Տերևից խշշացող կաղնուս, Ասում եմ՝ չի եղել մենակ, Ողջ կյանքը տվել է քամուն:

Անասող մթից մինչև մութ, Երագում իր կյանքն է տեսել, Ու թե հարցնես, առանց սուտ, Ասում է՝ բախտս բերել է...

Ես այսօր այնպես ուրախ եմ, ամամպ, Եվ այնպես մենակ, և՛ այնպես մենակ, Իմ ոտքերի տակ հաշիշի հոտից Հողը ծաղիկ է դուրս տվել բարակ:

Եվ ոլորել է գետը իր հունը Դեպի հեռացող ակունքը նրա, Հեզում եմ էլի ջրի կապույտը, Թե ամպե ունք կա իր աչքի վրա:

Եվ ափին կանգնած սևահեր մի կին Խաղում է համբույր իր իսկ շողքի հետ, Իսկ շողքը նրան խմել է բառում՝ Պատմելով քամուն, թե ինչ սեր ուներ...

Ես այսօր այնպես ուրախ եմ, ամամպ, Եվ այնպես մենակ, և՛ այնպես մենակ, Ու թվում է, թե ես ծնված օրից Կացին եմ սրել իմ գլխի համար...

Լամպը իջավ երկիր, Դարձավ սովորական, Լույս տեսնելու համար Չսպասեցինք ժամին: Երբ ծովեցինք մտքից, Միտքը դարձավ ական, Եվ պայթելու համար Չսպասեցինք ժամին: Ժամը անցավ գնաց, Պահը գնաց ձեռքից, Եվ թռիչքի համար Չսպասեցինք ժամին:

Ուշը մնաց հետո, Շուտը ընկավ առաջ, Եվ սիրելու համար Չսպասեցինք ժամին:

Եթե անկեղծ՝ սիրում եմ Առավոտվա հազը, Եվ դողն եմ սիրում անհագուստ, Սև հորինվածք է Երեկոյան ջազը, Երբ սևամորթ ես և դու: Եթե անկեղծ՝ սիրում եմ Անհնազանդ մազը, Որ չի ենթարկվում շոյանքի, Խենթ սանրվածք է Երեկոյան ջազը, Երբ խելագար ես կարգին: Եթե անկեղծ՝ սիրում եմ Մանկան արած խազը, Երբ բարդ արվեստն է հոգին, Սիրո շարժիչ է Երեկոյան ջազը. Գիժը գտնում է գժին:

Բացել եմ դռներս կիսատ, Փակված եմ դռներս կիսով, Գալիս եմ արանքից հատ-հատ, Գնում եմ արանքից հերթով:

Սերերս կախել եմ կարթից, Սպասել՝ ձկնորսի հույսով. Թվում է՝ քաշել եմ տակից, Թվում է՝ խեղդել եմ ձեռքով:

Բառերս հոտել եմ գլխից, Մեռնում եմ տողերս երգով. Աչքերս բացել եմ կիսատ, Աչքերս փակված եմ կիսով...

Թե օղբ գարնան էլ չիերիքի, Թե պատուհանը աչքերիդ բացես, Դու ինձ կտեսնես կեջի տնկելով. Այն քեզ համար է:

Թե մեղուն իջնի հյուսքերիդ ծաղիկ, Թե շուրթդ կծի քաղցր բարևով, Դու ինձ կտեսնես մահի մեջ նրա. Այն քեզ համար է:

Գիտեմ, սիրելիս, միշտ անհարմար է Թռիչքից հետո թևերը ծալել: Փոշի է ծամում իմ դատարկ ուսը. Այն քեզ համար է...

Ծովը ծեծում է դարձյալ ինքն իրեն, Սենյակիս պատը գալիս է-գնում, Այս պաղ ձանձրություն տեսնես ինչու է Վայրկյանը ժամի մեջ լռում:

Սենյակիս պատը գալիս է-գնում Որպես երկրաշարժ օրորոցային, Ես իմն եմ էլի՝ չորեքթաթ մանուկ, Եվ էլի լեզուս տալիս է կաղին:

Այս պաղ ձանձրություն տեսնես ինչու եմ Բարուրվել հողով, սնուցվել ծաղիկ, Ես ի՞մն եմ էլի, ես քո՞նն եմ, Եղեն, Թե՞ շողքս տարել է քամին...

Սե՛ր իմ, դարի մեջ Վայրկյան հաշվելը Անհմաստ գործ է, Արի՛, Փախուստի համար Կոշիկ մաշելը Անհմաստ փործ է, Արի՛:

Սե՛ր իմ, քարի հետ Հոգի տաշելը Քարտաշի գործն է, Արի՛, Աչքի հովհարով Մարդուն խաշելը Անագնիվ փործ է, Արի՛...

Նմանվեցինք իրար, Եվ իմ քթից թռած թրթռացող խալով Քո ձախ այտին իջավ սևաշաղախ երագ, Քո շուրթերը՝ ինձ պես Չհագեցան համով, Քո շուրթերը՝ ինձ պես Կիսատ սրտի մուրագ: Նմանվեցինք իրար, Եվ թաղեցինք հողում Միմյանց սիրո համար Ծիրանենու տնկի, Դու՛ պտղատու մի ծառ, Ես՛ շնչահեղձ մի տող, Նմանվեցինք իրար, Կասե՛ս՝ հանուն ինչի...



ԳԱՐՆԵՆ ԿԱԹՈՒԷ ՇՆՈՐՀԻԿ ՇԱՐՀԻՆՅԱԼ

ԼԻՄՈՆՈՎ ՉԱՅ

Չխնդաք, ոչ էլ լաք. չասեք՝ աշխարհն իրար է խառնվել, դու էլ կիսավարտիքն առել, մեջտեղ ես ընկել: Բանն էլ հենց այն է, որ այս խառնակ ժամանակահատվածում, երբ խոշոր պետությունների տերերն էլի մարդկային ճակատագրերի հետ են խաղում՝ ամերիկա-եվրոպական կեցվածք, պատժամիջոցներ, ուլտիմատումներ, բառեր, բառեր, բառեր նույն կինոն, ինչպես Արցախյան պատերազմում, ինչպես բոլոր պատերազմներում: Դարձյալ բարդ ժամանակներ են. մենք անհանգստանում ենք աշխարհի ցանկացած ծագում ապրող հայի համար: Ուկրաինայի վերջին 24-ին. Պուտինը սաստում է. չխառնվել: Բայց երբ, որ պատրաստ էր Ուկրաինայի հարցով ցանկացած սցենարի, ասում է՝ կնոջ հետ կաղորեն Ուկրաինայի քաղաքում հարցազրույցի համար: Ձեռնասկին չգիտես հուսահատ, թե արտիստիկ հայտարարում է, որ Ուկրաինան մենակ է մնացել... Ու այսքանից հետո մի կիսավարտիքը պատմություն դարձնել... բարձր արժեքներից ենք խոսում, հերոսական անցյալից... Բարձրում նրանք են՝ լուսն պայծառ տղաները, որ իրենց կյանքի գնով ամրագրեցին մեր և մահ նրանց՝ փերեզակների արժանապատիվ ու խաղաղ գոյությունը: Թանկ, թանկ գին է: Բայց մարդկային հարաբերություններում, ցավոք, դեռ գերիշխող է ժամանակը: Սա նախաբանն էր: Ես տողից էլ կսկսվի պատուհանը: Մեր թաղամասը նոր է, նոր են ամունով, օր երկրաշարժից հետո են սարքե ու բուն քաղաքից հեռու, դեպի հյուսիս զբնակեցրել: Գիշտ է, ինքը նոր է, բայց անունն է հին՝ Մուշ: Հայկական Կարուզոյի Արմենակ Շահմուրադյանի ծննդավայրն է, Կոմիտասի դպրոցն է, հրքը: Լավ, չչեղվիք: Մի խոսքով. ինչը՞ն է կրթն. Լեննականն էլ լոջըրին՝ Վահրամաբերդի, Մայիսյանի ճակղեղի դաշտերի ու վարելահողերի հաշվին: Բայց դե, ոչ երկրի ղեկավարներ, ոչ էլ մեր՝ քաղաքի տերերի ու զեղել չէր, են ժամանակ Սովետական Միություն էր, ու էր

բազմազգ միության շինարարները լցված Հայաստան արևոտի գույնի: Առաջինը «Անի» թաղամասն էր. մեր կործանված մայրաքաղաքի անունով. ոչ էլ կպավ անունը: Հեռվից օր կնայես, ինչխոր ռուբիկ-կուբիկներ էղնին. էլ մոնոլիտ, էլ պանելային, քանիմ հատ էլ քարից կա, վայ թե... Հըմի 58 կրեսն, իբր շինկազմակերպության համարն է: Իմ ընկեր Մորուքն էլ՝ Արմեն Տեր-Մկրտչյանը, էղ թվի մեջ մոգություն կտեսնի, ինքը ռեժիսոր է, իրար հետ «Շիրակ» ստուդիան ենք աշխատե, կրեսն 8-ին գումարած 5, կենն 13: Դե հըմի գնա ու մտածե՛ ընչի 58 ու ընչի՝ 13, եր օր ոչ 57 կա, ոչ 59... ու մորուքը մատներով սանրելով, քթի տակ խորհրդավոր կժպտա: Էհ, հա 13 թիվը հուղայականության սիմվոլն է, բայց ըղիկ ինչխ կառնչվի մեզի...հետո կխորանանք: Արմենը հըմի ընտիր ֆոտոներ կենն. ինքը հասկցցել է, օր ոչ թե օբյեկտներ ու մարդկանց, այլ լույսի կյանքը կնկարե: Հըմի կրեսք՝ ըրը կիսավարտիքը. քիչըմ համբերեք, ըղորդ հերթն էլ կհասնի: Լուսը նոր էր բացվե, գետինն էլ թաց էր, ու հավեսին գոլորշի գելներ: Իսկ առավոտ շուտ քնից ելնողն ի՞նչ կենն: Գելնի, լուսամուտը կբացե, ու բացելուն պես էղ թաց գոլորշախառն օդը նես կլցվի: Ըսիզ հազվագյուտ օրերից էր, օր աղբը չէին վառե: Աղբանցը Բուլվարնու մոտ է: Բուլվարնին էլ եզակի թաղամաս է՝ ստեղ իննհարկանիներ կան, ու իրա՛շք էր՝ երկրաշարժին չբլան (չեխական կանստրուկցիայով սարքած շենքեր են): Բուլվարնու ժողովուրդը կրես՝ մենք «գիբիլի» հոտ չենք առնի, մեր մոտ չկա: Ընչի բղի էղնի, քանու հետ կքշեք, ստեղ կղրկեք՝ ոչ կոնանք լուսամուտ բացե, ոչ տնից դուս գա: Ըսպես էլ անարդարություն կեղնի: Հոտն էլ չենք կոնա պատկան մարմինների մատվայր տեղափոխենք, օր իրանց թոքերն էլ զգան՝ որն է թթվածինը, որը՝ ծծմբազազը... բերաններս ցավաց թեգելով ու շեյր էնելով (ֆեյսբուքը նկատի ունիմ) քաղաքապետարան, կոմունալ բաժին, մարզպետարան, Սոֆյային էլ՝ Հովսեփյան, ժամանակին դիմեցինք, ճիշտն ըսած, լավ է ժամանակին էլավ ՔՊ-ից: Ինքը բարձրածայն, իսկական էլ անհանգստացավ, բայց դե... Նո՛վ վնիմանի:

Սաթենը, փուշին ծոցում, գարնան ջրափոսերի արանքներով, ցածրիկ պատերի տակով գնում էր մշեցի Սոնեի տուն: - Խեր էղնի, մարդ չհանդիպավ: Պատերի տակ շարված մանր ու խոշոր քարերի շուրջը բոլորած ջուրը ճլմփում էր Սաթենի ոտների տակ, մանր շիթերով թռչում չստերը: Բայց ոչինչ՝ մշեցի Սոնեի տունը հեռու չէ: Տուն տանող ցեխակոլով կածանի վրա շունչը տեղը բերեց, փուշին սեղմեց թարտացող սրտին, քայլ արեց առաջ: Փուշին թուրվանդա աղջկան շատ սազ կգա, փուշին կտանի որպես նվեր, որպես հարսնախոսություն, որպես... Միամիտ Սաթեն դեռ երկմտում է կածանի վրա: Մանր գլաքարերը հատիկ-հատիկ, կանոնավոր շարված մինչև շենք, Սաթեն, կուզես տոտիկ-տոտիկ գնա, կուզես մեկ շնչով անցիր, մեկ է գնալու ես: Ահա վերջին քարը: Սաթենն աջ ոտքն է առաջ դնում, և հանկարծ՝ դրը՛խկ, տան դուռը բացվում է, ու թուրվանդա աղջիկը դուլով վագրաջուրը շփում է Սաթենի ոտքերի առաջ, ջրացայտքի հետ՝ վա՛յ, Սաթեն մորքուր: Բարի նշան է: Աջ ոտքով շենք անցավ: Թուրվանդա աղջկա շիկանքն ու փուշու ծփանքը... Սոնեի սուտ չենուշումը չանցավ:

Միամիտ Սաթեն դեռ երկմտում է կածանի վրա: Մանր գլաքարերը հատիկ-հատիկ, կանոնավոր շարված մինչև շենք, Սաթեն, կուզես տոտիկ-տոտիկ գնա, կուզես մեկ շնչով անցիր, մեկ է գնալու ես: Ահա վերջին քարը: Սաթենն աջ ոտքն է առաջ դնում, և հանկարծ՝ դրը՛խկ, տան դուռը բացվում է, ու թուրվանդա աղջիկը դուլով վագրաջուրը շփում է Սաթենի ոտքերի առաջ, ջրացայտքի հետ՝ վա՛յ, Սաթեն մորքուր: Բարի նշան է: Աջ ոտքով շենք անցավ: Թուրվանդա աղջկա շիկանքն ու փուշու ծփանքը... Սոնեի սուտ չենուշումը չանցավ:

Սաթենը դարձավ գարնանալի ծարտար ու լեզվանի և տունդարծի ճամփին բանի տեղ չդրեց ոչ կաթիլը, ոչ էլ ջրափոսերի մեջ թողված գլաքարերը: Այդ կարճ ճանապարհին Սաթենը համ լաց եղավ, համ խնդաց, ասես երգեց ու պարեց, մտքով հասավ Ամերիկա /Հինդուչիման/: -Ավետիք տղա, Ենոքիս մեծակ կարգեցի: Գարնան կաթիլքն ու Սաթենի արտասուքը: Ենոք տղեն ու Հովհաննեսը ցածր սեղանի մոտ ճատրակ են խաղում, ուզկան Սաթենը բարի լուրով ներս ընկավ: -Օվաննես տղա, թուրվանդա աղջիկն ուզի-պրծա:

Ես վերջերս հեջ չայ խմելս չի գա: Եր օր շատ է պետք խմեմ՝ չեմ խմե: Ըսի՛ ա՛յ լիմոն օր էղնի՛ լիմոնով կխմեմ: Գնացի լիմոն առնելու ստեղի սուպերմարկետից: Հա՛, մեր մոտ մեծակ սուպերմարկետներն են՝ լավ, միջին ու սուպեր գներով: Էղ սուպերն էլ ռուսների համար է, ստեղ լիքը ռուս վանի կա, վարձով աղբարին, ու իրանց հաշվին մարկետները սուպեր կղառնան ու կշատորանան: Մեծակ մե թերութունըմ կա. բանկ չունիք: Նախ աղբը թափեցի, մինչև թափելը լուսամուտի տակն ու շենքի դեմն ավլեցի: Փնթի, փնթի ու աղբ սիրող ժողովուրդ ենք, ժողովուրդ ջան. բացառություններ կան մեզը ես, բայց օր չենեղվիք, ըսի՛ ժողովուրդիս հետ էղնիմ: Ես տղամարդիկ էլ ավտոները կկայնըցնեն հերթը չէ, կողքերն էլ «պեպեկնիցա» ու պիվոնյ բար են դարձրե: Հետաքրքիր է, ըղորդ հեջ ինքնասիրություն չունին: Հատուկ որոշել են, օր կամերա բղի դնեն ու էղ տան կընդգնեցի, խաս հարսների ու լավ մարդկանց թափածը տանին հենց իրանց դռների դեմը լցնեն, տեսնիմ՝ ինչքան ներվ ու սիրդ կդիմանա... էրեխե՛քը. էրեխեքն էլ, էրեխեքն էլ գլուխներդ կուռի... յուրի պլաստմասից վերոյով օր ֆուտբոլ խաղան...

Երթար. ճամփեն էլ Պանթոն կտանիր. Արցախում նահատակված հերոսին հիշատակի տուրք բղի տային: Տխրանք երկուսս էլ... Լույս հիշատակին ըսի: Լույս մեր բոլոր զոհվածների հիշատակին,- հուզմունքը կուլ տալով շարունակեց ինքը: Ըսեց՝ ճնշումս առավոտ ելած էր. լիմոն քամեցի խմեցի: -Մթնոլորտայինն էլ ելած կեղնի, բայց իմս ընգած է, կըսեն, թե ռուսականի կուրսն էլ զընկնի: Գընկնի էլ, գելնի էլ... Զցինք փետրվարի անոմալ տաքի ու բանաստեղծության շորշոփի վրա: Գրենք՝ կանցնի, բղղի օր անցնի: Դե, կիսավարտիքն էլ, ի՞նչ ըսեմ՝ գծավոր էր, նավաստու մայկի նման, ...«բռակ» էր, ինչպես մարդկային հարաբերություններն են շատ հաճախ խոսանված: Ես վերցրիմ... Ստեղ մե րոպեմ հարց՝ կարի ցեխավիկներին էղ փտած ու ծակծկված կտորներն ուրդեղի՞ց կանցիք, աշխատուժ ու էներգիա էլ կծախսեք... պուպուշ «յառլիկներով» ապրանքին էլ ոչ անուն, ոչ երկիր կերևա...



Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

Կիսավարտիքը, կիսավարտիքն ի՞նչ էղավ: Սպասեք էլի՛ հերթով: Հյուսիսային մայթով կքելեմ, սառույցը չի հալե, բայց հո արև չէ: Հեռախոսս է. գնագ: Հետաքրքիր է՝ էսօր ո՛վ է առաջինն ընծի հիշե: Բացեմ նայեմ... Ա՛... ժպտալով ես գանգի: Չեմ ըսե՛ ով էր: Ըբը բարև, ըսի՛ բարև: -Ի՞նչ կա, ըսի՛ գանգեմ քեզի, տեսնիմ ինչընս ես... -Լավ էմ, լավ՝ խնդալով պատասխանի: -Կըսե՛ ձայնիդ էլեւը լավ է, թարմ. լավ է, օր լավ ես: Ըբը թե՛ դո՛ւրսն ես... -Հա՛, խանութ կերթամ... մե՛ թեթևըմ իրան ըսի ծրագրերիս մասին: Մոռացա ըսեի՛ մինչև տնից դուս գալս էլի գանգ էղավ. էհ, ըսեմք, թե անունը տվի՛ իրան հաստատ չեք ճանչընա: Քնից նոր էր էլե, ըսեց մեկի կողմերը կերևան: Երկրորդ գանգողը, օր ըստ ընծի առաջինն էր, ճամփա բղի

Դե, կիսավարտիքն էլ, ի՞նչ ըսեմ՝ գծավոր էր, նավաստու մայկի նման, ...«բռակ» էր, ինչպես մարդկային հարաբերություններն են շատ հաճախ խոսանված: Ես վերցրիմ... Ստեղ մե րոպեմ հարց՝ կարի ցեխավիկներին էղ փտած ու ծակծկված կտորներն ուրդեղի՞ց կանցիք, աշխատուժ ու էներգիա էլ կծախսեք... պուպուշ «յառլիկներով» ապրանքին էլ ոչ անուն, ոչ երկիր կերևա... Չէ՛, չէ՛, կղիվ չեմ էրե, ծառ չեմ ըսե. խոսքս հատու էր, հստակ, մարդկայնորեն պարզ: Գիտեք՝ ինչն էր խնդիրը, օր էս փոքր, իրանից բան չենկայացնող հարցը գլոբալիզացրին: Ըղորդից առաջ գեմդերն էր ու իրա հավասարության նշանը, հըմի էլ՝ գլոբալը... էլի Եվրոպայի «ֆինդուֆլուշկեքն» են ով չիդե: Լևոն խեչոյանն ինչը՞ն էր գրե գրական էքսպրեսից հետո. «Կարիճի նման է Եվրոպան, մի բեռնու լուսապայծառ գլուխն է՛ կյանքը, մյուսում մահաբեր խայրոցով պոչը»: Ես գլոբալիստներն ի՞նչ գուզեն Աստծո ստեղծած աշխարհից, էրեխեք, չեմ հասկընա:

Խ ա Ն տեղերը մրմռան: Ի՞նչ ըսեմ... Իսկ ստեղ՝ առևտրի օբյեկտում լրիվ այլ հաշվարկ է. մարդկային՝ միջինից ցածր որակի: Շշմած երեսիս կնայեիմ. հա՛յ-հա՛յ. գավեշտ, մարդկային գործոն, սկզբունք, լայնահուն... բառերիս հունը չէին բռնե: Ըղորդ հեջ, ընծի կիսաքաղաքներ, թե վերջն ի՞նչ բղի էղնի: Ըսիկ էքսպրեսիմեստ էր ընծի համար. ըսես մարդը, կամ էս վերջերս հա՛ կպարծենաք՝ իսանը, ինչքան բութ նյութապաշտ կրնա էղնի... Եկան թե՛ տնօրենը ըսեց՝ չենք վերցնե. հազիվ էլ էղբան ցեցը կերած կիսավարտիքի... Գուզեք իմանաք՝ ո՞ր սուպերմարկետն է... Ընպես էլ հնչողություն ունի, հա՛ հենց ամերիկյան է, հենց ըղիկ է՝ քաղաքի անունով, մնացածն էլ՝ պատիկ-մստիկ, փայլվիլուն աչքերով մեմեջերով (զգացի՛ լավ մարդ կերևար) անհաղորդ ու ապակե աչքերով վաճառողով, ավելի ճիշտ՝ «ուհի»-ով, բան չունիմ ըսելու, մարդը կարող է հազար հոգս ունի: Հըմի ո՞վ խնդիր չունի: Տնօրենն էլ, առաջ խանուշիկ կըսեիք, չէ՞, թե՛ վարիչ, արդեն չեմ էլ հիշե: Ի՞նչ ըսեմ, ափսոս մեր էպոսը, մեր Սասնա ծուռը, ափսոս... լավ չմարմնանք... Տոպրակով կիսա՛ վարտիքը շխկոցով դրի դարակին. ըսի՛ ձերն էղնի, ձեզի նվեր. ըսպես էլ լիացեք: Հ.Գ - Լիմոնները լիկած էին, ուրիշ սուպերմարկետից առա, ու որոշեցի այլևս այդտեղ ոտք չդնել: Եվ լիաթոք ու հաղթած տուն եկա՛ այս սյուժեով: Իսկ Ուկրաինայում դեռ պատերազմ է... բայց ոչ մի պատերազմ մեկ օր ավել թող չշարունակվի: